

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀՈՄԱՆԻԶՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հոմանիշներ են համարվում լեզվական այն միավորները, որոնք ունեն մոտ կամ նույնական իմաստներ: Սրանց նկատմամբ լեզվաբանության մեջ միշտ էլ հետաքրքրություն է եղել, և հոմանիշների ուսումնասիրմանը նվիրված բազում աշխատություններ կան: Սա պատահական չէ, քանի որ հոմանիշները լեզվի հարստության, խոսքի ոճավորման կարևորագույն բաղադրատարրերն են: Սակայն պետք է նկատել, որ դրանց մասին գրված լեզվաբանական աշխատությունները մեծ մասամբ վերաբերում են բառային հոմանիշներին, իսկ քերականական հոմանիշները բավական քիչ են ուսումնասիրված: Ռուս լեզվաբանության մեջ Ա. Մ. Պեշկովսկին, «քերականական հոմանիշ» տերմինը առաջին անգամ գործածության մեջ դնելով, նշում է, որ այդպիսի միավորներ պետք է համարել քերականական իմաստով մոտ ձևերը¹: Ն. Պառնասյանը քերականական հոմանիշներ է համարում քերականական իմաստների, քերականական հարաբերությունների դրսևորումները տարբեր քերականական միջոցներով, որոնք ունեն իմաստային կամ ոճական նրբերանգներ, և որոնց հիմքում ընկած են միևնույն առարկայական հարաբերությունները²: Ռ. Ավետիսյանը քերականական հոմանիշների առաջացումը բացատրում է այսպես. «Նախադասության մեջ, կապված հաղորդման նպատակների ու ասացվածքի տրամաբանական շեշտի հետ, հեղինակը նույն միտքն արտահայտում է բառերի տարբեր շարադասությամբ, որոնք էլ քերականական հոմանիշության հիմք են ստեղծում»³: Տարբերակվում են ձևաբանական և շարահյուսական հոմանիշներ: Ինչպես իրավացիորեն նկատում է Լ. Եզեկյանը, քերականական հոմանիշների համակարգում ձևաբանական հոմանշության շարքերը համեմատաբար ավելի քիչ են, քան շարահյուսական մակարդակում⁴: Սա բացատրվում է շարահյուսական տարբերակների, քերականական

¹ Տե՛ս **Пешковский А.**, *Принципы и приемы стилистического анализа и оценки художественной прозы*, Ars poetica, Вып. 1, М., 1927, էջ 56:

² Տե՛ս **Պառնասյան Ն.**, *Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում*, Երև., 1970, էջ 26:

³ **Ավետիսյան Ռ.**, *Քերականական հոմանիշությունը ժամանակակից հայերենում*, Եր., 1988, էջ 3:

⁴ Տե՛ս **Եզեկյան Լ.**, *Ոճագիտություն*, Եր., 2003, էջ 229:

գուգաձևությունների բազմազանությամբ, ինչն էլ պատճառ է դառնում շարահյուսական հոմանիշների ձևավորման համար:

Հետաքրքրական է, որ Ն. Պառնասյանը *հոմանիշ* տերմինի փոխարեն նախընտրում է գործածել *համանիշ* տերմինը: Նա նշում է, որ **հոմանիշ** տերմինի գործածության կարիքը բնավ չկա, «հատկապես եթե հաշվի առնենք, որ **համ**- նախածանցին նույնանիշ գրաբարյան **հոմ** նախածանցը ժամանակակից հայերենում բոլորովին չի գործածվում»: Ն. Պառնասյանը **համանիշ** տերմինը գործածում է իմաստային և ոճական-կիրառական նրբերանգային տարբերություններ ունեցող լեզվական միավորների համար, իսկ լրիվ նույն իմաստն ունեցող և արտահայտած իմաստների ծավալով լրիվ համընկնող միավորների համար՝ **նույնանիշ** տերմինը ⁵ : Բառային հոմանիշների համար Ա. Սուքիասյանը առանձնացնում է **հոմանիշ** տերմինը՝ որպես այս հասկացությունների ընդհանուր անվանում, իսկ **նույնանիշ** և **համանիշ** տերմինները դիտարկում է որպես լեզվական միևնույն իրողության երկու տարբերակներ ⁶ : Ռ. Ավետիսյանը առաջարկում է բառային հոմանիշներին վերաբերող անվանումները տարածել նաև քերականական հոմանիշների վրա և «քերականական իմաստների ծավալով լրիվ համընկնողները անվանել քերականական նույնանիշներ, իմաստային ընդհանրությամբ ու նրբիմաստներով տարբերվողները՝ քերականական հոմանիշներ, իսկ ամբողջ իրողությունը՝ քերականական հոմանիշներ» ⁷ : Մենք մեր շարադրանքում նպատակահարմար ենք համարում գործածել **շարահյուսական հոմանիշ** տերմինը՝ ընդունելով Ա. Սուքիասյանի և Ռ. Ավետիսյանի մոտեցումները:

Այժմ փորձենք պարզել, թե որ կառույցներն են համարվում շարահյուսական հոմանիշներ և ինչ չափանիշներով: Նախ և առաջ պետք է որոշել, թե ի՞նչն է թույլ տալիս շարահյուսական կառույցներն անվանել հոմանիշներ՝ բովանդակային, թե՞ քերականական իմաստների ընդհանրությունը: Այսինքն՝ կարո՞ղ են հոմանիշ համարվել, օրինակ, **Նա իմ գեղեցիկ աղջիկն է** և **Նա իմ գեղանի դուստրն է** տիպի կառույցները: Լ. Թելյանը այս մասին գրում է. «Ակնհայտ է, որ կառույցների շարահյուսական իմաստների միջև առկա հարաբերությունը սահմանելու նախապայման պետք է համարվի դրանց բառային կազմերի նույնությունը, այլապես բառային և շարահյուսական հոմանիշության սահմանները հնարավոր չի լինի

⁵ Տե՛ս Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 21:

⁶ Տե՛ս Սուքիասյան Ա., *Հոմանիշները ժամանակակից հայերենում*, Եր., 1971, էջ 32-33:

⁷ Ավետիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 15:

տարազատել»⁸։ Ի. Կովտունովան ևս կարևորում է բառային կազմերի նույնությունը՝ նշելով, որ քերականական հոմանիշները պետք է գործ ունենան բացառապես քերականական իմաստների հետ⁹։ Սակայն ինչպես նկատում է Լ. Թեյլանը, այս պայմանը կարող է նաև խախտվել, եթե լինեն նյութական իմաստից զուրկ բառերի փոխարինումներ¹⁰։ Տվյալ դեպքում հոմանիշ կառույցները, նույնը լինելով բառային կազմով, կտարբերվեն քերականական իմաստների ծավալով¹¹։

Բառային կազմերով տարբերվող նախադասությունները Ի. Ժիլինը անվանում է հաղորդակցային տարբերակներ և նշում, որ սրանք հաղորդակցական բնույթի հոմանիշներ են և ոչ թե քերականական¹²։

Բոլորովին այլ կարծիքի է Ն. Վարդանյանը։ Նա շարահյուսական հոմանիշներ է համարում նաև տարբեր բառային կազմ ունեցող միավորները. «Հոմանիշ կարող են դիտվել նաև բառակազմերով չնույնացող, սակայն հոմանիշ (երբեմն նույնիսկ հականիշ) բառերով ձևավորված և զուգահեռ կառուցվածք ունեցող միավորները»¹³։ Նույն կերպ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» բուհական դասագրքում շարահյուսական հոմանիշներ են համարվել դրական և ժխտական կառուցվածք ունեցող նախադասություններ՝ 1. Դատողությունը ճիշտ չէ։// Դատողությունը սխալ է։ 2. Նա խելոք է։// Նա հիմարներից չէ¹⁴։

Այս առումով հետաքրքրական է Լ. Կաչանովայի՝ *կադապարային* և *կոնկրետ* շարահյուսական հոմանիշների տարբերակումը։ Այն կառույցները, որոնք ունեն նույն հիմնական բառային կազմը և նկարագրում են միևնույն իրադրությունը, նա համարում է *կոնկրետ շարահյուսական հոմանիշ* կառույցներ։ Իսկ այն կառույցները, որոնք, նկարագրելով միևնույն իրադրությունը, ունեն տարբեր բառային կազմեր, համարում է

⁸ Թեյլան Լ., *Շարահյուսական հոմանիշության չափանիշների մասին*, Արդի հայերենի քերականության հարցեր, Եր., 2016, էջ 71։

⁹ Տե՛ս Ковтунова И., *О синтаксической синонимике*, Вопросы культуры речи, М., 1955, էջ 130։

¹⁰ Տե՛ս Թեյլան Լ., նշվ. աշխ., էջ 71։

¹¹ Տե՛ս Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 37։

¹² Տե՛ս Жилин И., *Синонимика в синтаксисе современного немецкого языка*, Кр., 1974, էջ 10։

¹³ Վարդանյան Ն., *Շարահյուսական հոմանիշներն ըստ Պարույր Սևակի պոեմների*, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, Եր., 2004 թ, էջ 51։

¹⁴ Տե՛ս Ավետիսյան Յու, Սարգսյան Արտ., Թեյլան Լ. և այլք, *Հայոց լեզու և խոսքի մշակույթ*, Եր., 2016, էջ 250։

կադապարային և նշում, որ հոմանիշ կհամարվեն միայն ճանաչողական տեսանկյունով (ասպեկտ)¹⁵:

Մեր կարծիքով, շարահյուսական հոմանիշների սահմանների հատակեցման և տարբերակման համար անշուշտ պետք է կարևորել բառային կազմերի նույնությունը: Բառային կազմերով չնույնացող միավորների դեպքում հոմանշությունը դրսևորվում է առանձին բառային միավորներ միջև, այսինքն՝ **Նա իմ գեղեցիկ աղջիկն է և Նա իմ գեղանի դուստրն է** նախադասությունները, կարծում ենք, քերականական՝ այս դեպքում շարահյուսական հոմանիշներ չեն, քանի որ միևնույն բովանդակությունը քերականական տարբեր ձևերով չի արտահայտվել, այլ պարզապես առկա է **գեղեցիկ-գեղանի, աղջիկ-դուստր** բառային հոմանշությունը: Իսկ վերը նշված դասագրքում բերված օրինակներում դրսևորվել է **խելոք-հիմար, ճիշտ-սխալ** բառային հականշությունը, և ժխտման ու հաստատման միջոցով կառույցներն արտահայտում են միևնույն բովանդակությունը, ինչը շարահյուսական հոմանիշներ համարելու միակ պայմանը չէ:

Այնուհետև հարկ է որոշել, թե «շարահյուսական կառույցների միջև իմաստային հարաբերության ձևավորման վրա ի՞նչ ազդեցություն ունեն դրանք կազմող բառերի (հատկապես բայ-ստորոգյալների) քերականական կարգերի, բարդ նախադասությունների դեպքում՝ հատկապես մասերի եղանակաժամանակային բնութագրերի տարբերությունները»¹⁶: Այսինքն, պետք է պարզել, օրինակ, *Ես գնում եմ, Ես գնացի, Ես կգնամ* կառույցները հոմանիշնե՞ր են, թե՞ ոչ: Կարծում ենք, որ այսպիսի կառույցները շարահյուսական հոմանիշներ չեն: Լ. Թելյանը, այս կառույցները հոմանիշներ չհամարելով, նշում է այն հանգամանքը, որ «ձևաբանական տարբերությունները որոշակի համատեքստերում կարող են չեզոքանալ և այդպիսով գոյացնել հոմանիշ միավորներ (հմտ. «Վաղը մեկնում եմ», «Վաղը մեկնելու եմ», «Մարդը մահկանացու է» և «Մարդիկ մահկանացու են» և այլն)»¹⁷: Ն. Պառնասյանը այս վերջին օրինակների վերաբերյալ ահա թե ինչ է գրում. «Երբ ընդհանրական մտքեր, հանրահայտ ճշմարտություններ հաղորդելիս խոսողը գործածում է գոյականի եզակի թվի ձևը, դրանով ընդգծում է տվյալ առարկայի, առարկաների խմբի հավաքական ամբողջություն լինելը (Մարդը մահկանացու է): Երբ այդ նույն միտքն

¹⁵ St' u **Качанова Л.**, *Синтаксическая синонимия русских предложений в пределах изофункционального ряда "сложноподчиненное—простое предложение" когнитивно-синтаксический аспект*, Ставрополь, 2006, էջ 18:

¹⁶ Թելյան Լ., նշվ. աշխ., էջ 72:

¹⁷ Նույն տեղում, էջ 72:

արտահայտելիս գործածվում է գոյականի հոգնակի թվի ձևը, ընդգծվում է առարկաների խմբի հոգնակիությունը (Մարդիկ մահկանացու են)¹⁸: Նա այս օրինակները համարում է շարահյուսական հոմանիշներ՝ հաշվի առնելով այն, որ հոմանիշ են ոչ թե **մարդիկ** և **մարդ** ձևերը, այլ ամբողջական նախադասությունները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այսպիսի դեպքերում, փաստորեն, առաջ է մղվում բովանդակային կողմը:

Լ. Թեյլանն առաջարկում է շարահյուսական մակարդակում ևս առանձնացնել բառային իմաստաբանության մեջ ընդունված ենթանվանական և հոմանշական դաշտերին գուգահեռ իմաստային դաշտեր: Նա ենթանվանական դաշտին շարահյուսական մակարդակում համապատասխանող իմաստային դաշտը կոչում է ստորակցական և գրում, որ «սրա գերիշխող (դոմինանտ) անդամ կարելի է համարել տվյալ միավորի կառուցվածքային կադապարը, որն իր կոնկրետ իրացումների հետ կապված կլինի քերականական իմաստների սեռատեսակային հարաբերությամբ: Ստորակցական դաշտի անդամ միավորները բառակազմերի նույնության պայմաններում տարբերվում են քերականական կարգային իմաստներով՝ եղանակ, ժամանակ, սեռ, հոլով և այլն, որոնք, ինչպես նշեցինք, որոշակի համատեքստերում կարող են չեզոքանալ և առաջացնել հոմանիշներ»¹⁹:

Պետք է անդրադառնալ նաև փոխադարձ փոխակերպելիության՝ շարահյուսական հոմանիշների որոշման պայման հանդիսանալու հարցին:

Նախ պետք է տարբերակել *փոխակերպելիությունը* *փոխարինելիությունից*:

Ի. Ժիլինը շարահյուսական հոմանիշներին բնորոշ առանձնահատկություն համարում է փոխարինելիությունը: Նա գրում է, որ շարահյուսական հոմանիշներ պետք է համարել այն կառույցները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստային նշանակություն, համապատասխանում են քերականական իմաստներով, արտահայտում են նման շարահյուսական հարաբերություններ և կարող են որոշակի կոնտեքստում փոխադարձ փոխարինվել ²⁰ : Այս դեպքում, սակայն, լեզվաբանը ուշադրություն է դարձնում ոչ միայն փոխադարձ փոխարինվելու հանգամանքին, այլ նաև նրան, որ դա տեղի ունենա որոշակի խոսքաշարում, ինչպես ինքն է նշում՝ շարահյուսական հոմանիշ շարքում: Նա «մանևրային» է համարում այն մոտեցումը, որ եթե երկու շարահյուսական կառույցներ ուղղակիորեն կարող

¹⁸ Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 31:

¹⁹ Թեյլան Լ., նշվ. աշխ., էջ 74:

²⁰ Տե՛ս Жилин И., նշվ. աշխ., էջ 10:

են գործածվել մեկը մյուսի փոխարեն առանց իմաստի փոփոխման, ապա հոմանիշներ են, և հակառակը²¹:

Ս. Գյուլբուդադյանի կարծիքով շարահյուսական հոմանիշները կարող են փոխարինել միմյանց, բայց ոչ միշտ: Այդ դեպքերը, երբ չեն փոխարինում միմյանց, Ս. Գյուլբուդադյանը պայմանավորում է ոճական տարբերությամբ: Նա բերում է **Տղան հանդիպեց հորը** և **Տղան հանդիպեց հոր հետ** նախադասությունները և գրում, որ սրանք ունեն այն նուրբ տարբերությունը, որ առաջին դեպքում այդ հանդիպումը կարող է պատահական լինել, իսկ երկրորդ դեպքում ենթադրվում է նախնական պայմանավորվածություն²²:

Ըստ Ն. Պառնասյանի՝ փոխարինելիությունը հոմանիշների որոշման պայման չի կարող լինել. «Թե՛ բառական և թե՛ հատկապես շարահյուսական մակարդակում մեկ հոմանիշը մյուսով փոխարինելը հաճախ իր հետ բերում է ոճական, հուզաարտահայտչական, իսկ հաճախ նաև նուրբ իմաստային տարբերություններ, մի բան, որ կարող է անդրադառնալ հաղորդման նպատակի, խոսքի վրա»: Իսկ *փոխակերպություն* նա համարում է մի կառույցի կառուցվածքային-քերականական այնպիսի փոփոխությունը, որի ընթացքում շարահյուսական հարաբերությունների հիմքում ընկած առարկայական հարաբերությունները մնում են նույնը՝ ձեռք բերելով միայն ոճական, նրբիմաստային տարբերություններ²³: Լ. Թեյլանը, կարևորելով Ն. Պառնասյանի այս դրույթը, գրում է, որ այն ընդհանրական արժեք ունի և կարող է օգտակար լինել շարահյուսական մակարդակի բոլոր միավորների քննության համար²⁴: Այս առումով հետաքրքրական է Վ. Սուխոտինի հետևյալ միտքը. «....Փոխադարձ փոխարինելիությունը չի կարող դիտվել որպես միակ միջոց այս կամ այն կառույցները շարահյուսական հոմանիշներ համարելու համար, քանի որ մեկ շարահյուսական կառույցը մեկ ուրիշով փոխարինելու հնարավորությունը հիմք չէ, այլ լեզվում համապատասխան կառուցվածքի հետևանք»²⁵:

Լ. Կիսելյովան ևս շարահյուսական հոմանիշների տարբերակման չափանիշ համարել է փոխակերպելիությունը: Նրա կարծիքով հոմանիշ պետք է համարել այն կառույցները, որոնք տարբերվում են ձևաբանական կազմով,

²¹ Տե՛ս **Жилин И.**, նշվ. աշխ., էջ 12:

²² Տե՛ս **Գյուլբուդադյան Ս.**, *Ժամանակակից հայերենի շարահյուսություն*, Եր., 1988, էջ 245-246:

²³ Տե՛ս **Պառնասյան Ն.**, նշվ. աշխ., էջ 37:

²⁴ **Թեյլան Լ.**, *Ժամանակային և պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշ կառույցները ժամանակակից հայերենում*, Լեզվի և ոճի հարցեր, 1985, N 9, էջ 8:

²⁵ Տե՛ս **Сухотин В.**, *Синтаксическая синонимика в современном русском литературном языке*, М., 1960, էջ 16:

կարող են պատկանել խոսքի տարբեր ոճերին և կարող են փոխադարձ փոխակերպվել²⁶:

Մենք ևս կարծում ենք, որ շարահյուսական հոմանիշների որոշման հիմք պետք է համարել փոխադարձ փոխակերպելիությունը: Փոխարինելիությունը առավել համատեքստային երևույթ է և ավելի շատ կարող է դրսևորվել բառային հոմանիշների դեպքում: Այս առումով մեջքերենք Ա. Սուքիասյանի հետևյալ միտքը. «Հոմանիշների փոխադարձ փոխարինելիության հնարավորությունը հիմնականում կախման մեջ է դրվում հոմանիշների բացարձակապես համարժեք (ադեկվատ) համատեքստերում, այսինքն միևնույն շարահյուսական կառուցվածքում և նույն բառային միջավայրում գործածվելու փաստից»²⁷: Սակայն նույնիսկ բառային հոմանիշների դեպքում այն բացարձակ չափանիշ չէ, «քանի որ նույնիսկ նույնանիշ բառերը ոչ բոլոր համատեքստերում է հնարավոր իրարով փոխարինել, մյուս կողմից, եթե անգամ հոմանիշների շարքի մեջ մտնող առանձին բառեր իմաստներով ոչ մի տարբերություն չունեն, նրանք կարող են տարբերակվել ոճական կիրառությամբ կամ գործածականությամբ»²⁸:

Ռ. Ավետիսյանը փոխակերպումը պայմանավորում է տրամաբանական շեշտի փոփոխությամբ, որն էլ առաջացնում է նրբիմաստային տարբերություններ:²⁹ Ընդհանրապես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ցանկացած կառույց գործածվում է որոշակի նպատակադրմամբ և որոշակի ոճական արժեք ունի: Ա. Գվոզդևը գրում է, որ շատ կարևոր է հոմանիշների ճիշտ և տեղին ընտրությունը: Նա *ոճական հնար* է անվանում այն իրողությունը, երբ անտեղի ենք համարում մի որևէ հոմանիշի գործածությունը այնտեղ, որտեղ նույն շարքից մյուս հոմանիշն առավել տեղին է³⁰:

Ըստ Ն. Պառնասյանի՝ «երբ խոսողն ընտրում է նույն հարաբերությունն արտահայտող ձևերից մեկը, ապա նպատակ է ունենում ընդգծել այդ հարաբերության տարբեր կողմերը, դրսևորում է իր սուբյեկտիվ ընկալման ձևը, իր վերաբերմունքը և կամ հուզաարտահայտչական, ոճական տարբեր երանգավորում է տալիս խոսքին»³¹:

²⁶ Տե՛ս **Киселева Л.**, *Синтаксическая синонимия конструкций, выражающих условные отношения*, Ленинград, 1984, էջ 175:

²⁷ **Սուքիասյան Ա.**, նշվ. աշխ., էջ 152:

²⁸ **Սուքիասյան Ա.**, *Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն*, Եր., 2004, էջ 124:

²⁹ Տե՛ս **Ավետիսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 21:

³⁰ Տե՛ս **Гвоздев А.**, *Очерки по стилистике русского языка*, М., 1952, էջ 31-32:

³¹ **Պառնասյան Ն.**, նշվ. աշխ., էջ 35-36:

Ա. Չուբարյանը շարահյուսական հոմանիշների ընտրությունը համարում է խոսողի կամ գրողի կողմից ընտրվող միջոցների համակարգի մաս, որով արտահայտվում է նրա հաղորդակցական միտումը. «Այստեղից հետևում է, որ հոմանիշ կառույցների շարքից այս կամ այն շարահյուսական կառույցի ընտրությունը երբեք պատահական չէ, և, մշտապես, պատճառաբանված է»: Նրա կարծիքով ցանկացած շարահյուսական կառույց նախ և առաջ նպատակ ունի ներկայացնել «օբյեկտիվ իրականության մեջ առկա հարաբերությունների այս կամ այն տիպը: Մյուս կողմից, բնականաբար, այդ հարաբերությունների յուրաքանչյուր տիպ իր համապատասխան, հաղորդակցական առումով նախընտրելի արտահայտությունն է գտնում որոշակի շարահյուսական կառույցում»: Լեզվաբանը նշում է, որ, օրինակ, դերբայական դարձվածը գործածվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը ցանկանում է դրանով արտահայտված տեղեկույթը ներկայացնել պակաս կարևոր տվյալ հաղորդակցական գործընթացի համար, իսկ կարևոր ինֆորմացիայի դեպքում նախընտրելի է դիմավոր երկրորդական նախադասության գործածությունը³²:

Սրա հետ կապված՝ պետք է պարզել, թե տարամակարդակ միավորները (պարզ և բարդ նախադասություններ, նախադասություն և բառակապակցություն, բառակապակցություն և բառ և այլն) հոմանիշ են, թե՞ ոչ:

Գ. Ռիխտերը շարահյուսական հոմանիշներ է համարում բովանդակային ընդհանրություն ունեցող ամբողջական նախադասությունները. «Շարահյուսական հոմանիշներ համարելու փաստը անհրաժեշտ է դիտարկել ամբողջական նախադասությունների միջև, որոնք տարբերվում են միայն շարահյուսական կառուցվածքով, ոճական նրբերանգներով»³³:

Ի. Կովտունովան կարևորում է կառույցների քերականական զուգահեռությունը, այսինքն, օրինակ, պարզ և բարդ նախադասությունները չեն կարող դիտարկվել իբրև շարահյուսական հոմանիշներ: Հոմանիշներ կհամարվեն այն զուգահեռ կառույցները, որոնք տարբերվում են միայն այն տարրերով, որոնք տվյալ քերականական իմաստի արտահայտիչներ են, օրինակ՝ պատճառային նշանակությամբ բարդ նախադասությունները կհամարվեն հոմանիշներ, եթե տարբեր լինեն միայն այդ նշանակությունն

³² Տե՛ս **Չուբարյան Ա.**, *Ժամանակային կառույցների շարահյուսական համանշտության հարցի շուրջ*, Օտար լեզուները դպրոցում, Եր., 2003, էջ 144-149:

³³ Տե՛ս **Рихтер Г.**, *Синтаксическая синонимика в современном русском литературном языке (стилистические наблюдения)*, Русский язык в школе, № 3, М., 1937 г., էջ 28:

արտահայտող միջոցները: Լեզվաբանը կարծում է, որ հակառակ դեպքում քերականական իմաստների ուսումնասիրությունը կդադարի գոյություն ունենալ իբրև ինքնուրույն խնդիր և կմիաձուլվի տեքստի իմաստային և ոճական վերլուծությանը³⁴:

Ի. Ժիլինը հոմանիշ է համարում ոչ միայն նույն, այլև տարբեր կառուցվածքն ունեցող միավորները: Նա հակադրվում է ինչպես այն լեզվաբաններին, ովքեր հոմանշությունը դիտարկում են միայն զուգահեռ կառույցների դեպքում, այնպես էլ տարամակարդակ կառույցների հոմանշությունն ընդունող լեզվաբաններին, և իրավացիորեն փաստում, որ հոմանիշ կարող են լինել և՛ տարամակարդակ, և՛ միևնույն մակարդակն ունեցող կառույցները³⁵:

Վ. Սուխոտինը անհրաժեշտ է համարում ընդգծել այն փաստը, որ հոմանիշ շարքերը չեն սահմանափակվում այս կամ այն միավորների գործածությամբ, օրինակ՝ բառակապակցություն, պարզ նախադասություն, բարդ նախադասություն և այլն. «Բառակապակցությունը և նախադասությունը միայն հիմք են հանդիսանում շարահյուսական հոմանիշների դասակարգման համար: Փաստերը վկայում են, որ շարահյուսական հոմանիշների բնույթի որոշումը բառակապակցության կամ նախադասության ոլորտում առանձին հնարավոր չէ, քանի որ ձևաիմաստաբանական պլանում այս միավորների միջև եղած հարաբերությունները խաչվում են»³⁶: Հ. Հարությունյանը շարահյուսական հոմանիշների՝ տարբեր կամ նույն կարգի միավորներ լինելը համարում է սրանց բնորոշ առանձնահատկություն. «Շարահյուսական հոմանիշները ունեն այն առանձնահատկությունը, որ կարող են լինել տարբեր կարգի միավորներ՝ բառ և բառակապակցություն, բառ և նախադասություն, բառակապակցություն և նախադասություն, ինչպես նաև նույն կարգի միավորներ, հիմնականում նախադասություններ»³⁷:

Այնպիսի շարահյուսական կառույցները, ինչպես՝ *աղջիկը, որը սև մազեր ունի- սև մազերով աղջիկը- սև մազեր ունեցող աղջիկը*, կարծում ենք, կարելի է համարել հոմանիշներ: Այս դեպքում պետք է հաշվի առնել այն փաստը, որ համեմատվում են ամբողջական նախադասության այն մասերը, որոնք, ըստ երևույթին, մեկ կառույցի տարբեր փոխակերպումներն են (հմմտ.

³⁴ Տե՛ս Ковтунова И., նշվ. աշխ., էջ 126, 130-133:

³⁵ Տե՛ս Жилин И., նշվ. աշխ., էջ 14-15:

³⁶ Сухотин В., նշվ. աշխ., էջ 20:

³⁷ Հարությունյան Հ., *Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում*, Եր., 1970, էջ 53:

Աղջիկը, որը սև մազեր ուներ, ապրում էր Երևանում// Սև մազերով աղջիկը ապրում էր Երևանում// Սև մազեր ունեցող աղջիկը ապրում էր Երևանում):

Այս ամենը ամբողջացնելով՝ կարող ենք ասել, որ շարահյուսական հոմանիշները նույն հիմնական բառակազմն ունեցող ինչպես նույն, այնպես էլ տարբեր կարգի շարահյուսական կառուցվածքներն են, որոնք քերականական տարբեր միջոցներով արտահայտում են միևնույն հարաբերությունը, հավասարաթեք են և կարող են փոխադարձ փոխակերպվել:

Արտահայտվել են նաև շարահյուսական կառույցների հոմանշությունը ժխտող կարծիքներ: Ա. Չուլանովան զարգացնում է Պ. Չեսնոկովի այն դրույթը, որ եթե միևնույն միտքը կարելի է արտահայտել տարբեր շարահյուսական կառույցների միջոցով, ապա այդպիսի կառույցները կարող են համարվել այլընտրանքային, բայց ոչ հոմանիշ, և, որքան էլ ունենան բովանդակային համարժեքություն և նկարագրեն միևնույն իրադրությունը, դրանք առնչվում են խոսքի և ոչ թե շարահյուսության ոլորտին: Սրա հիման վրա Ա. Չուլանովան տարբերակում է *համակարգային՝ ստատիկ հոմանիշներ* և *ոչ համակարգային՝ դինամիկ հոմանիշներ*: Համակարգային հոմանիշներն ա համարում է այն միավորները, որոնք գործածվում են պատրաստի վիճակում, ունեն համարժեք կամ մոտ իմաստներ և տարբերվում են արտահայտման միջոցներով, խոսողին տալիս են միևնույն լեզվական միտքն արտահայտելու այլընտրանքային ձևեր: Ոչ համակարգային հոմանիշները իմաստով մոտ կամ համարժեք են, բայց ունեն շարահյուսական տարբեր կառուցվածքներ և պատրաստի վիճակում չեն ընտրվում խոսողի լեզվամտածողության մեջ ամրակայված հոմանշային շարքից: Այս դեպքում շարահյուսական կաղապարի ընտրությունը որոշվում է բառաձևի ընտրությամբ: Սրանք համարվում են այլընտրանքային և պետք է ուսումնասիրվեն խոսքի լեզվաբանության շրջանակներում:³⁸

Մեր կարծիքով շարահյուսական հոմանիշները խոսքին հատկացնելը այնքան էլ նպատակահարմար չէ: Ըստ էության, լեզվական ցանկացած միավոր ծառայեցվում է խոսք կառուցելուն, և պետք է քննել խոսքում ունեցած իր դերով, կատարած գործառնությունը, բայց սա չի նշանակում, որ այն դադարում է լեզվական միավոր լինելուց: Այլընտրանքային համարվող միավորներն էլ, կարծում ենք, կան խոսողի գիտակցության մեջ, և խոսողը, կախված իրադրությունից, նպատակադրումից, դրսևորվող վերաբերմունքից, ընտրում է որևէ տարբերակ: Շարահյուսական հոմանիշները խոսքին

³⁸ См. у Чуланова А., К вопросу о целесообразности и значении термина "Синтаксическая синонимия", Вестник Томского государственного университета, Томск, № 320, 2009, էջ 29-30:

հատկացնելով՝ նեղացնում ենք լեզվական սահմանը՝ թողնելով միայն նախնական կադապարներ: Լեզուն ուսումնասիրում է քերականական տարբեր իմաստները և դրանց արտահայտման հնարավոր տարբերակները, դրսևորած առանձնահատկությունները, իսկ խոսքում ուսումնասիրվում են որպես հաղորդակցային միավորներ՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Պետք է նկատի ունենալ, որ լեզուն և խոսքը, լեզվականը և խոսքայինը փոխկապակցված են. «Լեզվականը պայմանավորում է խոսքայինը և միաժամանակ պայմանավորվում է նրանով: Խոսքայինը լեզվականն է՝ իրականացած հաղորդակցական տվյալ պահին և հիմք դարձած նոր որակի լեզվական-հաղորդակցական հնարավորության կազմավորման համար»³⁹: Եվ ինչպես, օրինակ, լեզվի բառապաշարը կարող է բառագետին հետաքրքրել որպես բառագիտական ուսումնասիրության նյութ, այնպես էլ լեզվաոճաբանին կհետաքրքրի բառապաշարի, բառերի գեղագիտական հագեցվածությունը, ոճական առանձնահատկությունները⁴⁰:

Այսպիսով, լեզվում շարահյուսական հոմանիշների առանձնացումն ու տարբերակումը առավել արդյունավետ և նպատակահարմար կլինի, քանի որ վերջիններս սերտորեն կապված են ձևաբանական և բառական միավորներին, պայմանավորված են մեկը մյուսով, ուստի սրանց քննությունը կհանգեցնի լեզվական միավորների բազմակողմանի ուսումնասիրմանը, ինչպես նաև հնարավորություն կտա բացահայտել շարահյուսական տարբեր կառույցների միջև առկա հարաբերությունները, դրանց գործածության ոճական նպատակադրումն ու արժեքը:

Саргсян Нране – Стандарты для определение синтаксических синонимов. Синтаксические синонимы - это синтаксические конструкции, которые имеют почти одинаковый словарный состав, выражают сходные отношения с помощью разных грамматических средств и способны взаимно трансформироваться. Эти конструкции могут принадлежать как к одному, так и к разным синтаксическим уровням.

Sargsyan Nrane - Standards for determination of syntactic synonyms. Syntactic synonyms are syntactic structures that have almost the same vocabulary, can express similar relationships using different grammatical means and can mutually transform. These structures can belong to the same and to different syntactic levels.

³⁹ Համբարձումյան Վ., Լեզու, ոճ, խոսք, Բանբեր Երևանի համալսարանի, 3 (45), Երևան, 1981 թ., էջ 183, 186:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում: